ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն _______ Դ. Կոստանդյան
«15» 05 2023թ.

# ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Վարսավիրություն

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ Սերգեյ Ավանեսյան

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել
Բնագիտամաթեմատիկական առարկաների, հումանիտար առարկաների
մեթոդմիավորման 10.05.2023թ 12.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդմիավորման նախագահ _______ Դաշունց Ա.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մեթոդմիավորման նախագահ _______ Դանիելյան Ս.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _______ Ավանեսյան Ս.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ _______ Գևորգյան Ա.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2023թ.

*ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՐՍԱՎԻՐՈՒԹՅՈՒՆ»*

**ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝**
ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 5-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

**ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**
**Շաբաթական 2 դասաժամ**
**Ընդհանուր տևողությունը՝** 68 դասաժամ, որից՝ 25.5 դասաժամ տեսական
42.5 դասաժամ գործնական

**ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝**
«Վարսավիրություն» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: «Վարսավիրություն» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը և հնարավորություն են տալիս ձեռք բերել ընդհանրական գիտելիքներ և պատկերացումներ վարսավիրության մասին: Խմբակը կնպաստի աշակերտների ձեռնարկատիրական գործունեության և իրականացման ձևերի հետ ծանոթացմանը, կձևավորի բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտությունների ձեռքբերմանը, որոնք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները, կատարել ծախսերի հաշվարկ, տվյալ ոլորտի համար մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր, հաշվել հարկերը, տուրքերը, կազմել ֆինանսական հաշվետվություններ, ինչը կնպաստի նաև «Տնտեսագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ (ՀՊՉ Հ-4), կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս (ՀՊՉ Հ-5), վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից (ՀՊՉ Հ-8), կիրառի բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար (ՀՊՉ Հ-9), ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա (ՀՊՉ Հ-10), տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ (ՀՊՉ Հ-21), հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին, բացատրի դրանց կարևորությունը, ցուցաբերի պատասխանատու և հանրօգուտ վարքագիծ (ՀՊՉ Հ-22), գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ (ՀՊՉ Հ-25), ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ (ՀՊՉ Հ-26), արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը (ՀՊՉ Հ-31), արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ (ՀՊՉ Հ-32), ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնազարգացմանը միտված վարքագիծ (ՀՊՉ Հ-33), ընկերակցի, դրսևորի բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին (ՀՊՉ Հ-34), դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր (ՀՊՉ Հ-46), ճանաչի սեփական ֆիզիկական հնարավորությունները և դրանց համապատասխան զարգացնի իր շարժողական ընդունակությունները (ՀՊՉ Հ-47), տիրապետի քաղաքացիական պաշտպանության և առաջին օգնության հիմունքներին, ճիշտ կողմնորոշվի արտակարգ իրավիճակներում (ՀՊՉ Հ-50),

կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա (ՀՊՉ Հ-51):

*ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ՝*

«Վարսավիրություն» խմբակի նպատակն է աշակերտի մոտ ձևավորել սանիտարիայի և հիգիենայի նորմերը պահպանելու կարողություններ: Աշակերտին տալ գիտելիքներ վարսավիրական գործիքների, էլեկտրական և ոչ էլեկտրական սարքավորումների պարզ կառուցվածքի, գործածման ձևի, օգտագործման անվտանգության կանոնների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանք ճանաճելու, կիրառելու, տեխնիկական պարզ սպասարկում կատարելու կարողություններ: Աշակերտին տալ գիտելիքներ մազերի խնամքի և տարբեր նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել մազերը խնամելու, տարբեր աշխատանքներ նախապատրաստելու կարողություններ: Աշակերտին տալ գիտելիքներ դեմքի տիպերի, գլխի ձևերի, կառուցվածքների,սանրվածքների ուրվագծերի և տիպերի վերաբերյալ, ինչպես նաև ճակատային մազափնջեչ ձևավորելու, կտրվածքները և սանրվածքները մոդելավորելու կարողություններ: Աշակերտին տալ գիտելիքներ վարսավիրական արվեստի ծագման և զարգացման պատմության, մազերի և կեղծամների հարդարման տեսակների, եղանակների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել տարբեր եղանակներով կանանց և տղամարդկանց մազերի հարդարման, ավարտական գործողությունների կատարման, կեղծամների հարմարեցման կարողություններ: Աշակերտին տալ գիտելիքներ կանացի բազային, մոդելային կտրվածքների կատարման տեխնոլոգիաների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել տարբեր մեթոդներով և հնարքներով կանացի կտրվածքներ կտրելու կտրման գործողությունների ճիշտ հաջորդականությունը պահպանելու կարողություններ, տղամարդկանց կտրվածքների մեթոդների, բեղերի և մորուսի ձևավորման վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել տարբեր հնարքներով և մեթոդներով այդ կտրվածքների կատարման կարողություններ: Սովորողին տալ գիտելիքներ մազերի ներկման տեսակների, տարբեր ներկանյութերի (նախա) պատրաստման եղանակների և ներկման տեխնոլոգիաների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ներկերն ընտրելու, կիրառելու, ըստ հրահանգի օգտագործելու կարողություններ:

*ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝*

1. Պահպանել սանիտարիայի նորմերը
2. Պահպանել հիգիենայի նորմերը
3. Աշխատել սանրող գործիքներով
4. Աշխատել մազերի կտրման գործիքներով
5. Աշխատել չորացնող գործիքներով
6. Աշխատել գանգրացնող գործիքներով
7. Կատարել սարքավորումների պարզ սպասարկում
8. Ներկայացնել գլխամաշկի և մազերի առանձնահատկությունները
9. Տարբերել խնամքի միջոցների տեսակները
10. Նախապատրաստել հաճախորդի մազերը
11. Սանրել հաճախորդի մազերը
12. Չորացնել հաճախորդի մազերը
13. Ներկայացնել դեմքի և գլխի ձևերը
14. Ներկայացնել կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը
15. Ներկայացնել սանրվածքների ուրվագծերը և ուրվագծերի երկրաչափական ձևերը
16. Ընտրել և մոդելավորել կտրվածքները և սանրվածքները
17. Ներկայացնել մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը
18. Մազերը նախապատրաստել հարդարման
19. Կատարել մազերի հարդարում՝ ըստ հրահանգի
20. Տեղադրել կեղծամը
21. Մազերը նախապատրաստել կտրման
22. Կատարել մազերի կտրում՝ ըստ հրահանգի
23. Ներկայացնել մազերը ներկող, մաշկը պաշտպանող և ներկանյութը մաքրող նյութերը
24. Ներկել մազերը

*ԱՐԴՅՈՒՆՔ 1. Պահպանել սանիտարիայի նորմերը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում սանիտարիայի նորմերը,
2. Տարբեր իրավիճակներում պահպանում է սանիտարիայի նորմերը,
3. Դասակարգում է օգտագործվող հիմնական ախտահանող նյութերը,
4. Ճիշտ է պատրաստում դրանցից լուծույթներ

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար և կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

1. Սանիտարիայի նորմերը
2. Օգտագործվող հիմնական ախտահանող նյութերը:

Գործնական աշխատանքի միջոցով աշակերտին կառաջադրվի տարբեր իրավիճակներում պահպանել սանիտարիայի նորմերը, ախտահանող նյութերից պատրաստել լուծույթներ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք, ախտահանող նյութեր:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 1.1 | Սանիտարիայի նորմերը | 1 | 1 | |
| 1.2 | Սանիտարիայի նորմերի պահպանումը տարբեր իրավիճակներում | 1 | | 1 |
| 1.3 | Հիմնական ախտահանող նյութերը | 1 | 1 | |
| 1.4 | Ախտահանող նյութերից լուծույթների պատրաստումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 2. Պահպանել հիգիենայի նորմերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում անձնական հիգիենայի նորմերը
2. Ճիշտ է ներկայացնում աշխատանաքային հիգիենայի նորմերը
3. Պահպանում է հիգիենայի նորմերը տարբեր իրավիճակներում

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար և կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

1. Անձնական հիգիենայի նորմերը
2. Աշխատանաքային հիգիենայի նորմերը:

Գործնական աշխատանքի միջոցով աշակերտին կառաջադրվի տարբեր իրավիճակներում պահպանել հիգիենայի նորմերը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 1 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 2.1 | Անձնական հիգիենայի նորմերը | 1 | 1 | |
| 2.2 | Աշխատանքային հիգիենայի նորմերը | 1 | 1 | |
| 2.3 | Հիգիենայի նորմերի պահպանումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 3. Աշխատել սանրող գործիքներով*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճանաչում է սանրող գործիքները
2. Ճիշտ է ներկայացնում սանրող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը
3. Ճիշտ է ներկայացնում սանրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները
4. Ճիշտ է գործածում սանրող գործիքները

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ցույց տալ մազերի կտրելու համար նախատեսված սանրի բռնելու տարբերակները, հարթ, կլոր, «Ֆլատոպեր», «Ստրայպեր», երանգավորման համար նախատեսված սանրերի բռնելու տարբերակները և գործնականում օգտագործման եղանակները, սանրերը բռնելու հիմնական, օժանդակ տարբերակները և գործնականում օգտագործման եղանակները, աշխատանքից հետո ախտահանել գործիքները և պահպանելով անվտանգության կանոնները դրանք տեղավորել համապատասխան դարակներում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1.5 ժամ

Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 3.1 | Սանրող գործիքներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.2 | Սանրող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 3.3 | Սանրով աշխատելու անվտանգության կանոնները, գործիքների գործածումը | 1 | 0.5 | 0.5 |
| 3.4 | Սանրող գործիքների գործածումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աշխատել մազերի կտրման գործիքներով*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճանաչում է մազերը կտրող գործիքները
2. Ճիշտ է ներկայացնում կտրող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը

3. Ճիշտ է ներկայացնում կտրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները
4. Ճիշտ է գործածում կտրող գործիքները

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել թե ինչ որակի և ինչ ձևերի են լինում մկրատները, քանի տեսակի են լինում ածելիները, ֆիլիրովային մկրատները, մկրատի վրա ցուցադրել դրա կառուցվածքային մասերը, ցույց տալ ֆիլիրովային մկրատի բռնելու ձևերը, նշել ֆիլիրովային ածելիի հիմնական մասերը, ածելին բռնելու տարբերակները և գործածումը, նշել մազ կտրող մեքենաների տեսակները և դրանց կառուցվածքը, մազ կտրող մեքենայով աշխատելու անվտանգության կանոնները, գործածել «Մարտկոցային» մեքենան տղամարդկանց և կանանց սանրվածքների ժամանակ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1.5 ժամ

Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 4.1 | Մազերը կտրող գործիքներ | 1 | 0.5 | 0.5 |
| 4.2 | Կտրող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 4.3 | Կտրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները | 1 | 0.5 | 0.5 |
| 4.4 | Կտրող գործիքների գործածումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 5. Աշխատել չորացնող գործիքներով*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճանաչում է մազերը չորացնող գործիքները
2. Ճիշտ է ներկայացնում համապատասխան չորացնող գործիքը՝ ելնելով աշխատանքային խնդրից
3. Ճիշտ է ներկայացնում չորացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները
4. Ճիշտ է աշխատում չորացնող գործիքներով:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի անվտանգության կանոնների պահպանմամբ գործածել վարսահարդարիչը, վարսարդուկը, սուշուարը, կլիմազոնը, առաջարկված խնդրի դեպքում ընտրել ճիշտ չորացնող գործիք, ցույց տալ չորացնող գործիքներով ճիշտ աշխատելու տարբերակները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1.5 ժամ
Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 5.1 | Մազերը չորացնող գործիքները | 1 | 0.5 | 0.5 |
| 5.2 | Համապատասխան չորացնող գործիքը՝ ելնելով աշխատանքային խնդրից | 1 | 0.5 | 0.5 |
| 5.3 | Չորացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները | 1 | 0.5 | 0.5 |
| 5.4 | Չորացնող գործիքների գործածումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 6. Աշխատել գանգրացնող գործիքներով*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճանաչում է մազերը գանգրացնող գործիքները
2. Ճիշտ է ներկայացնում գանգրացնող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը
3. Ճիշտ է ներկայացնում գանգրացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները
4. Ճիշտ է կիրառում մազերի փաթաթման տեխնիկաները
5. մազերից ճիշտ ու անվտանգ է հեռացնում գանգրացնող գործիքը

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերը գանգրացնող գործիքներ, նշել մազերը հարդարող և գանգրացնող գործիքների հետ աշխատելու անվտանգության կանոնները, վարսավիրական գործում օգտագործվող վարսափաթաթուկները, քիմիական գանգրացման ժամանակ օգտագործվող վարսափաթաթուկները, ցուցադրել էլեկտրափաթաթուկով աշխատելու տեխնիկան, նշել գանգրացնող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմամբ գործածել գանգրացնող գործիքները, կիրառելով ճիշտ տեխնիկան կատարել մազերի փաթաթում և խնամել արդեն փաթաթված մազերը, մազերից ճիշտ և անվտանգ հեռացնել գանգրացնող գործիքները, ժամանակավոր գանգրացման ժամանակ կիրառել վարսափաթաթուկները, կոկլյուշները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1.5 ժամ
Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 6.1 | Մազերը գանգրացնող գործիքները | 1 | 0.5 | 0.5 |
| 6.2 | Գանգրացնող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 6.3 | Գանգրացնող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի | 1 | 0.5 | 0.5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կանոնները | | | |
| 6.4 | Մազերի փաթաթման տեխնիկայի կիրառումը, մազերից զանգրացնող գործիքի անվտանգ հեռացումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 7. Կատարել սարքավորումների պարզ սպասարկում*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճիշտ է ներկայացնում վարսավիրական գործում օգտագործվող գործիք-սարքավորումների հիմնական կառուցվածքը և հիմնական անսարքությունները
2. Ճիշտ է ներկայացնում գործիք-սարքավորումների սպասարկման անվտանգության տեխնիկայի կանոնները
3. Ճիշտ է կատարում սարքավորումների պարզ սպասարկում:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել վարսավիրական գործում օգտագործվող գործիք-սարքավորումների հիմնական կառուցվածքը, անսարքությունները, սպասարկման անվտանգության տեխնիկայի կանոնները, հանձնարարված աշխատանքի համար ընտրել էլեկտրական սարքավորումներ, կատարել էլեկտրական սարքավորումների պարզ սպասարկում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Գործնական ուսուցում 1 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 7.1 | Վարսավիրական գործում օգտագործվող գործիք-սարքավորումների հիմնական կառուցվածքը, անսարքությունների վերացումը, պարզ սպասարկումը, անվտանգության տեխնիկայի կանոնները | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 8. Ներկայացնել գլխամաշկի և մազերի առանձնահատկությունները*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճիշտ է ներկայացնում գլխամաշկի կառուցվածքը
2. Ճիշտ է ներկայացնում մազերի կառուցվածքը
3. Ճիշտ է ներկայացնում մազերի տեսակները
4. Ճիշտ է ներկայացնում գլխամաշկի և մազերի խնդիրները:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերի և գլխամաշկի առանձնահատկությունները, մազերի տեսակները, մազերի կառուցվածքը, մազերի աճման շրջանները, գլխամաշկի կառուցվածքը, մազերի խնդիրները, նշված դեպքում տարբերակել մազերի տեսակները, խնդիրները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 8.1 | Մազաբանություն: Գլխամաշկի կառուցվածքը և խնդիրները | 1 | 1 | |
| 8.2 | Մազերի կառուցվածքը, տեսակները, որակումը և խնդիրները | 1 | 1 | |

*ԱՐԴՅՈՒՆՔ 9. Տարբերել խնամքի միջոցների տեսակները*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. ճիշտ է ներկայացնում մազերը լվացող միջոցների նշանակությունը
2. տարբերակում է լվացող միջոցները
3. ճիշտ է ներկայացնում բուժիչ-կանխարգելիչ միջոցների նշանակությունը և տեսակները

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերի լվացման նյութերի նշանակությունը և տեսակները, տարբերակել առաջարկված լվացող միջոցները, առաջարկված կոսմետիկ միջոցները, գործածել չոր և յուղոտ մազերի համար նախատեսված լվացող միջոցները, ճյուղավորված և կոտրված մազերի համար նախատեսված լվացող միջոցները, ներկայացնել բուժիչ-կանխարգելիչ միջոցների նշանակությունը և տեսակները, նախքան գլխի լվացումը և չորացումը կիրառել բուժիչ-կանխարգելիչ միջոցները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 9.1 | Մազերը լվացող նյութերի տեսակները, նշանակությունը | 1 | 1 | |
| 9.2 | Բուժիչ-կանխարգելիչ միջոցների նշանակությունը և տեսակները, կիրառումը նախքան գլխի լվացումը և չորացումը | 1 | 1 | |

*ԱՐԴՅՈՒՆՔ 10. Նախապատրաստել հաճախորդի մազերը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. ճիշտ է ներկայացնում մազերի նախապատրաստման (գլխի լվացման, բուժիչ-կանխարգելիչ միջոցների կիրառման) անվտանգության տեխնիկայի կանոնները
2. ճիշտ է ընտրում մազերը լվացող նյութերը
3. ճիշտ է ընտրում համապատասխան բուժիչ-կանխարգելիչ միջոցները՝ գնահատելով գլխամաշկի և մազերի խնդիրները
4. ճիշտ է տարածում դիմակը գլխամաշկի կամ մազերի վրա, պահպանում դիմակի կիրառման հրահանգի պահանջները
5. ճիշտ է ընտրում գլխամաշկի մերսման ձևերը և կատարում մերսում

6. Ճիշտ է լվանում գլուխը

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացել գլխի լվացման նախապատրաստական աշխատանքները, տեխնոլոգիան և քայլաշարը, անվտանգության տեխնիկայի կանոնների և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմամբ լվանալ հաճախորդի գլուխը, կիրառել բուժիչ-կանխարգելիչ միջոցները, ներկայացնել փրփրօճառներն՝ ըստ իրենց բաղադրության, կազմության և տեսակների, կոտրված մազերի համար ընտրել և կիրառել լվացող միջոցներ, ճյուղավորված մազերի համար ընտրել և կիրառել լվացող միջոցներ, խճճված և հանգուցված մազերի համար ընտրել և կիրառել լվացող միջոցներ, գլխամաշկի, ճյուղավորված, կոտրված, խճճված և հանգուցված մազերի խնդիրների ժամանակ ընտրել և կիրառել բուժիչ-կանխարգելիչ միջոցներ, ներկայացնել մազերի կառուցվածքը բարելավող միջոցները, կիրառման հրահանգի պահանջների պահպանմամբ պատրաստել դիմակներ, պատրաստել և տարածել ճյուղավորված, չոր, յուղոտ, խճճված և հանգուցված մազերի համար նախատեսված դիմակները, ներկայացնել գլխամաշկի մերսման տեխնոլոգիան, մերսել հաճախորդի գլխամաշկը, օգտագործելով մերսման 1-ից մինչև 12-րդ շարժումները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2.5 ժամ
Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 10.1 | Գլխի լվացման տեխնոլոգիան և նախապատրաստական աշխատանքները | 1 | 0.5 | 0.5 |
| 10.2 | Լվացող նյութերի ընտրությունը և կիրառումը կոտրված, ճյուղավորված, խճճված, հանգուցված մազերի համար | 1 | 0.5 | 0.5 |
| 10.3 | Բուժիչ–կանխարգելիչ միջոցների ընտրությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 10.4 | Դիմակներ | 1 | 0.5 | 0.5 |
| 10.5 | Գլխի մերսում, մերսման տեխնոլոգիան | 1 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 11. Սանրել հաճախորդի մազերը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճիշտ է ներկայացնում սանրման անվտանգության տեխնիկայի կանոնները
2. Ճիշտ է ընտրում սանրը
3. Ճիշտ է սանրում մազերը

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի սխտահանել սանրերը և գործածել դրանք՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները, հաշվի առնելով տվյալ հաճախորդի մազերի խնդիրները ընտրել համապատասխան սանր՝ մազերի չորացման համար, հաշվի առնելով տվյալ հաճախորդի մազերի խնդիրները գործածել համապատասխան սանրը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Գործնական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 11.1 | Սանրման անվտանգության տեխնիկայի կանոնները | 1 | | 1 |
| 11.2 | Սանրերի ընտրությունն ու մազերի սանրումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 12. Չորացնել հաճախորդի մազերը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. ճիշտ է ներկայացնում մազերի չորացման անվտանգության տեխնիկայի կանոնները
2. ճիշտ է ընտրում չորացնող միջոցը
3. ճիշտ է ընտրում ու կարգավորում էլեկտրական սարքավորումների աշխատանքային ռեժիմը
4. ճիշտ է կատարում չորացումը:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները վարսահարդարիչով, վարսարդուկով չորացնել հաճախորդի մազերը, տվյալ մազերի համար ընտրել չորացնող միջոցները և կարգավորել էլեկտրական սարքավորումների աշխատանքային ռեժիմը, ուղիղ հարդարման համար ընտրել չորացնող միջոցներ, մազերի գանգրացման համար ընտրել չորացնող միջոցներ, չորացնել վնասված, խճճված, հանգուցված մազերը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Գործնական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 12.1 | Մազերի չորացման անվտանգության տեխնիկայի կանոնները, չորացնող միջոցը | 1 | | 1 |
| 12.2 | Էլեկտրական սարքավորումների աշխատանքային ռեժիմի ընտրությունն ու մազերի չորացումը | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 13. Ներկայացնել դեմքի և գլխի ձևերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում գլխի և դեմքի ձևերը,
2. Ճիշտ է բնութագրում գլխի և դեմքի առանձնահատկությունները,
3. Ճիշտ է ներկայացնում մարդաչափական տվյալները:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների միջոցով: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար և կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ներկայացնել գլխի և դեմքի ձևերը, առանձնահատկությունները
2. Մարդաչափական տվյալները:

Աշակերտին կհանձնարարվի գործնական առաջադրանքով որոշել տվյալ հաճախորդի մարդաչափական տվյալները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1 ժամ
Գործնական ուսուցում 1 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 13.1 | Գլխի և դեմքի ձևերը և դրանց առանձնահատկությունները, սանրվածքների մոդելավորումը | 1 | 0.5 | 0.5 |
| 13.2 | Մարդաչափական տվյալներ | 1 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 14. Ներկայացնել կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. ճիշտ է ներկայացնում կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը
2. ճիշտ է բնութագրում կտրվածքների և սանրվածքների առանձնահատկությունները:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար և կարաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

1. Կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը
2. Կտրվածքների և սանրվածքների առանձնահատկությունները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 0.5 ժամ
Գործնական ուսուցում 0.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 14.1 | Կտրվածքների և սանրվածքների տեսակները, տիպերը և առանձնահատկությունները | 1 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 15. Ներկայացնել սանրվածքների ուրվագծերը և ուրվագծերի երկրաչափական ձևերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում սանրվածքների ուրվագծերը
2. Ճիշտ է ներկայացնում սանրվածքների ուրվագծերի երկրաչափական ձևերը
3. Ճիշտ է ներկայացնում սանրվածքների ուրվագծերը տարբեր դիրքերից:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար և կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

1. Սանրվածքների ուրվագծերը, դրանց երկրաչափական ձևերը
2. Սանրվածքների տարբեր դիրքերից ուրվագծերը

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 0.5 ժամ

Գործնական ուսուցում 0.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 15.1 | Սանրվածքների ուրվագծերը, երկրաչափական ձևերը | 1 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 16. Ընտրել և մոդելավորել կտրվածքները և սանրվածքները:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ընտրում կտրվածքը՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևը, մարդաչափական առանձնահատկությունները
2. Ճիշտ է մոդելավորում կտրվածքը՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևը, մարդաչափական առանձնահատկությունները

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Աշակերտին կառաջադրվի ընտրել և մոդելավորել կտրվածքը՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևը, մարդաչափական առանձնահատկությունները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Գործնական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 16.1 | Ընտրել և մոդելավորել կտրվածքը, սանրվածքը | 2 | | 2 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 17. Ներկայացնել մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. ճիշտ է ներկայացնում մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութեր և դրանց նշանակությունը
2. ճիշտ է ներկայացնում հարդարման նյութերի օգտագործման հաջորդականությունը
3. ճիշտ է ներկայացնում մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը, դրանց նշանակությունը, ուղիղ հարդարման, խոպոպիկներ ստանալու ժամանակ վնասված, չոր և յուղոտ մազերի անհրաժեշտ հերթականությամբ օգտագործել հարդարման նյութերը, անհրաժեշտ հաջորդականությամբ օգտագործել կանանց և տղամարդկանց մազերի համար նախատեսված հարդարման նյութերը ներկայացնելով դրանց տարբերությունը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 0.5 ժամ
Գործնական ուսուցում 0.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 17.1 | Մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը և դրանց նշանակությունը, կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները | 1 | 0.5 | 0.5 |
| 17.2 | Հարդարման նյութերի օգտագործման հաջորդականությունը | 0.5 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 18. Մազերը նախապատրաստել հարդարման*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. աշխատանքի նախապատրաստումը ճիշտ է կատարված
2. մազաբաժանումը ճիշտ է կատարված

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի մազերի հարդարումը սկսելուց առաջ նախապատրաստել հաճախորդի մազերը, գործիքները, լվանալ հաճախորդի մազերը՝ օգտագործելով դիմակներ, մազերի հարդարումը սկսելուց առաջ կատարել մազաբաժանումներ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Գործնական ուսուցում 1 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 18.1 | Հարդարումից առաջ աշխատանքի նախապատրաստում, մազաբաժանում | 1 | | 1 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 19. Կատարել մազերի հարդարում՝ ըստ հրահանգի*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճիշտ է ընտրում հարդարման նյութերը
2. Ճիշտ է ընտրում հարդարման գործիքները
3. Ճիշտ է կատարում մազերի հարդարումը:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի կարճ, երկար, քիմիական գանգրացման ենթարկված մազերի հարդարման համար ընտրել գործիքներ և նյութեր, ներկայացնել մազերը փաթաթուկով փաթաթելու աշխատանքի կանոնները, տարբեր չափերի փաթաթուկների միջոցով հարդարել հաճախորդի մազերը, կատարել ուղիղ, գանգուր, քիմիական գանգրացման ենթարկված մազերի հարդարում և զզզում, հարդարել դասական կարճ սանրվածք, դասական «կառե», շերտավոր «կառե» և զզել մազերը, փաթաթուկներով և «սուշուարի» մեթոդով հարդարել հաճախորդի մազերը, «Բրաշինգ» մեթոդով կատարել մազերի հարդարում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 0.5 ժամ

Գործնական ուսուցում 2.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 19.1 | Հարդարման նյութերի, գործիքների ընտրությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 19.2 | Մազերի հարդարում | 2 | | 2 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 20. Տեղադրել կեղծամը*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Ճիշտ է ներկայացնում կեղծամների տեսակները և տարբերակում է դրանք
2. Ճիշտ է տեղադրում կեղծամը
3. Ճիշտ է կատարում կեղծամի հարդարումը

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել կեղծամների տեսակները և կիրառությունը, կեղծամների խնամքի մեթոդները, լվանալ, սանրել և չորացնել բնական կեղծամները,

վարսահարդարիչի միջոցով հարդարել բնական կեղծամները՝ օգտագործելով հարդարման միջոցները, վարսափաթաթուկի միջոցով հարդարել բնական կեղծամները՝ օգտագործելով հարդարման միջոցները, հաճախորդի մազերի վրա տեղադրել բնական, արհեստական կեղծամներ, հարդարել և տեղադրել պոչիկ շինյոնները:
Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:
Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1 ժամ
Գործնական ուսուցում 1 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 20.1 | Կեղծամների տեսակները և կիրառությունը | 1 | 0.5 | 0.5 |
| 20.2 | Կեղծամների խնամքը, հարդարումը | 1 | 0.5 | 0.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 21. Մազերը նախապատրաստել կտրման*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. Աշխատանքի նախապատրաստումը ճիշտ է կատարված
2. Մազաբաժանումը ճիշտ է կատարված:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերի կտրման ժամանակ աշխատանքի նախապատրաստման աշխատանքները, ստուգել գործիքների հիգիենիկ վիճակը, կտրվածքից առաջ ստուգել գլխամաշկի և մազերի վիճակը, հաճախորդի գլխի լվացման համար ընտրել լվացող նյութերը՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը, բուժիչ-կանխարգելիչ միջոցների կիրառմամբ չոր, ճյուղավորված և հանգուցված մազերը նախապատրաստել կտրման, լվացման նյութերի և բուժիչ-կանխարգելիչ միջոցների կիրառմամբ քիմիական գանգրացման ենթարկված մազերը նախապատրաստել կտրման, ներկայացնել կտրվածքի իրականացման սկզբնական քայլերը, ստուգիչ մազափունջը և մազափնջերի մշակման ձևերը, մազաբաժանումների կատարումը և բաժուկների տեսակները, կարճ, շերտավոր, հակադիր (կոնտրաստ) և ոչ հակադիր (ոչ կոնտրաստ) կտրվածքների ժամանակ կատարել մազաբաժանումներ:
Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:
Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 0.5 ժամ
Գործնական ուսուցում 3.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21.1 | Մազերը նախապատրաստել կտրման | 1 | 0.5 | 0.5 |
| 21.2 | Կատարել կտրվածքին համապատասխան մազաբաժանում | 3 | | 3 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 22. Կատարել մազերի կտրում՝ ըստ հրահանգի*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

1. ճիշտ է կատարում մազերի կտրումը՝ կտրման տարբեր մեթոդների և հնարքների կիրառմամբ
2. պահպանում է կտրման գործողությունների ճիշտ հաջորդականությունը
3. ճիշտ է կատարում աշխատանքի ավարտական գործողությունները
4. ճիշտ է կատարում բեղերի, մորուքի կտրումը և ձևավորումը

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի.

1. Կտրման տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ կտրել հաճախորդի մազերը
2. Կատարել «Պոյտինգ» մազերի կարճացում և ֆիլիրովկա
3. Ներկայացնել մազերի սահող կտրվածքը՝ սլայսինգ
4. Կատարել ոլորած մազափնջերի կտրումը «սահող» կտրվածքով
5. Կատարել ոլորած մազերի կտրումն ուղիղ կտրվածքով
6. Ստուգիչ մազափնջի ձգման 90°-ով կտրել մազերը
7. Մազափնջի ձգման 0°-ով կտրել մազերը
8. Ըստ ստուգիչ մազափնջի կտրել ծոծրակային հատվածի մազերը
9. Ներկայացնել «Մատների վրա» կտրվածքը
10. Ներկայացնել ուղիղ մկրատի կիրառմամբ «մազերի զրոյական վիճակ» կտրվածքը
11. Ներկայացնել տուշովկայի կատարման տեխնոլոգիան
12. Ներկայացնել ֆիլիրովկան
13. Ներկայացնել ճակատի մազափնջերը
14. Ճակատի մազափնջերի կտրում
15. Կտրել տղամարդու պարզ սանրվածք, կիրառել ֆիլիրովկայի մկրատը
16. Մազխուզիչի կիրառմամբ կտրել տղամարդու մազերը, կիրառել ֆիլիրովկայի մկրատը
17. «Սանրի վրա» հնարով կտրել տղամարդու կարճ մազերը, կիրառել ֆիլիրովկայի մկրատը
18. Ներկայացնել մորուքի կտրման տեխնոլոգիան
19. Ներկայացնել մորուքի տեսակները
20. Ներկայացնել բեղերի պատմությունը
21. Ներկայացնել բեղերի տեսակները

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՌՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1.5 ժամ

Գործնական ուսուցում 7.5 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 22.1 | Մազերի կտրումը՝ կտրման տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ: Մազափնջերի ներքին և արտաքին կտրման մեթոդները | 3 | 0.5 | 2.5 |
| 22.2 | Կտրման գործողությունների ճիշտ հաջորդականությունը, աշխատանքի ավարտական գործողությունները | 3 | 0.5 | 2.5 |
| 22.3 | Տղամարդկանց բեղերի, մորուքի կտրումը և ձևավորումը | 3 | 0.5 | 2.5 |

*ԱՐԴՅՈՒՆՔ 23. Ներկայացնել մազերը ներկող, մաշկը պաշտպանող և ներկանյութը մաքրող նյութերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում մազերի ներկանյութերի տեսակներն ու դրանց նշանակությունը,
2. Ճիշտ է ներկայացնում մաշկը պաշտպանող և ներկանյութերի հետքերը մաքրող միջոցներն ու դրանց նշանակությունը,
3. Ճիշտ է ներկայացնում ներկանյութերի, մաշկի պաշտպանման և ներկանյութի հետքերը մաքրող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել մազերի ներկման պատմությունը, մազերի ներկանյութերի տեսակները ու դրանց նշանակությունը, մաշկը պաշտպանող և ներկանյութերի հետքերը մաքրող միջոցները, կիրառել մաշկը պաշտպանող միջոցները, ներկանյութերի հետքերը մաքրող միջոցները՝ անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմամբ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 23.1 | Մազերի ներկման պատմությունը, ներկանյութերի տեսակները, դրանց նշանակությունը | 1 | 1 | |
| 23.2 | Մաշկը պաշտպանող և ներկանյութերի հետքերը մաքրող միջոցները, դրանց նշանակությունը | 1 | 1 | |

*ԱՐԴՅՈՒՆՔ 24. Ներկել մազերը:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝*

1. Ճիշտ է ներկայացնում մազերի տարբեր ներկանյութերով աշխատելու տեխնոլոգիան
2. Ճիշտ է ներկայացնում մազերի ներկման տեսակները
3. Ճիշտ է ընտրում և նախապատրաստում ներկանյութը
4. Ճիշտ է ներկում մազերը:

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ*

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների կատարման միջոցով: Աշակերտին կառաջադրվի.

1. Ներկայացնել մազերի ներկման տեխնոլոգիան
2. Ներկայացնել պիգմենտների բաշխումը մազում
3. Ներկայացնել գույների խորությունն ու ուղղությունը
4. Ներկայացնել ներկանյութը մազերին քսելու կանոնները
5. Կատարել մազերի ներկում, մազերի լվացում և հարդարում
6. Կատարել փայլաթիթեղով միլիրովկա, լվանալ մազերը և հարդարել

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

*ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ*

Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր տեսակի գործիքները, մասնագիտական համապատասխան գրականություն դիտակտիկ նյութեր, մասնագիտական կահավորանք, մասնագիտական հանդերձանք:

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝*

Տեսական ուսուցում 1 ժամ
Գործնական ուսուցում 2 ժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 24.1 | Մազերի տարբեր ներկանյութերով աշխատելու տեխնոլոգիան, մազերի ներկման տեսակները, ներկանյութի նախապատրաստումը | 1 | 1 | |
| 24.2 | Մազերի ներկում | 2 | | 2 |

*ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*


- Ванханен В.Д.,Суханова Г.А. (1986): Гигиена
- Ռ. Ս. Մխիթարյան, Ա. Ա. Հովսեփյան, Ա. Գ. Միրզոյան «Մասնավոր հյուսվածաբանություն»
- П.Н.Иванова «Основы парикмахерского дела», Москва, 2008 г.
- О.Н.Кулешкова «Технология и оборудование парикмахерских работ» Москва, 2002 г.
- М.Гэннон, Р.Томпсон «Основы стрижки, окраски и укладки волос» Венгрия, 2003г.
- А.В. Константинов «Как стать парикмахером» 1993 г.
- О.Н.Кулешкова,О.Б.Читаева, Т.Н.Бутко «Основы дизайна прически» Москва, 2002 г.
- Н.П.Алешина «Парикмахерское дело», Материаловедение Москва, 2000 г.
- Учебная книга «Парикмахерское дело», С Петербург, 2002г.
- Константинов А. В. «Парикмахерское дело», Москва, 1997г.
- О.А. Панченко Стрижка. Моделирование, Прическа, 90 с. 1997 г.
- И.Ю. Одинокова, Черниченко Т.А., Технология парикмахерских работ, 98 с., 2004г.
- Панина Н.И. Основы парикмахерского дела, 61 с. 2004г.
- Марченко М., Энциклопедия домашнего парикмахера, 372 с. 1999г.